

ՀԱՍԱՐԱԿՈՒ ԲՅԱՆ ԻՐԱԿ

«Անցնենք, վերջապես, ինտելիգենցիայի հարցին, ինժեներ-տեխնիկական աշխատողների, կուլտուրական մականոթի աշխատողների, բնդհանրապես ծառայողների և այլոց հարցին: Ինտելիգենցիան նույնպես մեծ փոփոխություններ է կրել անցյալ ժամանակաշրջանում: Այդ արդեն այն հիմք, կոշտագատած ինտելիգենցիան չէ, վարը փորձում էր դասակարգերից վեր դասել իրեն, բայց իսկապես իր մասսայով առած՝ ծառայում էր կալվածատերերին և կապիտալիստներին: Մեր խորհրդային ինտելիգենցիան, դա միանգամայն նոր ինտելիգենցիա չէ, վորը բոլոր արևատներով կապված է բանվոր դասակարգի և գյուղացիության հետ: Փոխվել է, նայ՛ ինտելիգենցիայի կազմը: Ազնվականությունից և բուրժուազիայից յեղածները կտրվում են մեր խորհրդային ինտելիգենցիայի փոքր սոկուսը: Խորհրդային ինտելիգենցիայի 80—90 տոկոսը, դա բանվոր դասակարգից, գյուղացիությունից և աշխատավորության այլ շերտերից յեղածներն են: Փոխվել է, վերջապես ինտելիգենցիայի գործունեության մասն բուն իսկ բնույթը: Առաջ նա պետք է ծառայեր հարուստ դասակարգերին, վարավիետեղ նրա համար այլ յեղք չկար: Այժմ նա պետք է ծառայի ժողովրդին, վարավիետեղ շահագործողական դասակարգերն այլևս չկան: Յեղ հենց այդ պատճառով այժմ նա իրավահավասար անդամն է խորհրդային հասարակության, վորտեղ նա բանվորների և գյուղացիների հետ մեկտեղ, նրանց հետ միասին լծված, կատարում է նոր անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցումը:

Ինչպես տեսնում եք, դա բոլորովին նոր, աշխատավոր ինտելիգենցիա չէ, վորի նմանը չեք գտնի յերկրագնդի վոչ մի յերկրում»:

(ՄՍԱԼԻՆ, «ԽՍՀ Միության Սահմանադրության նախագծի մասին» սոված գեկուցումից Խորհուրդների 8-րդ Համամիութենական Արտակարգ Համագումարում):

ՀԻԱՆՍԱԼԻ ՅԵ ԴԱՐՁԵԼ ԿՅԱՆՔԸ

Իր պատանեկության ժամանակ Հակոբ Յերզնկյանը չէր ել կարող յերազել այն վիճակի մասին, վորին նա հասել է այժմ: Որվա հացի կարոտ մի պատանի, անդրապետ, ուսման ծախսով, նա ստիպված էր հոգալ ամենից առաջ իր Ֆիլիբեական գոյություն մասին: 14 տարեկան հասակից նա միայն գործարանի ծուխ տեսավ, ուժերից վեր աշխատանք ու կարիք: Իսկ կանոնավոր կրթությունն այդպես ել մնաց նրա բաղձանքը, միշտ անիրականայի յերազել:

Հակոբ Յերզնկյանն այժմ աշխատում է ծխախոտի գործարանում գլխավոր մեխանիկի պաշտոնով: Վոչ մի հոգս այլևս չի մթաղնում նրա պայծառ կյանքը: Յերբասարդություն չըջանի ծանր մղձավանձը մուսայություն է արված, իսկ իր դավանների տեսքը նրան լցնում է նոր ուրախությունը, ալիլի պայծառ արարչի վառ հույսերով: Յեղ անիրականացի յերազել իր համար իրականություն դարձավ նոր կարգերում՝ նրա զավակների համար:

Յերզնկյանի մեծ տղան— Լեվոնը, վաղուց արդեն ավարտել է Յերբեկանի պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը, հետո շարունակել է սովորել Մոսկվայում և այժմ իբրեղ միկրոբիոլոգ աշխատում է Յերբեկանում՝ Պանիր-յուղ կենտրոնի կենտրոնական լաբորատորիայի վարչիչ պաշտոնով: Նա գոցենտի կոչում ունի և ինչն ևս կազմեր է պատրաստում չըջանների համապատասխան լաբորատորիաները համար: Իր կատարած կարևոր-գիտահետազոտական աշխատանքի համար Լեվոնը շնորհակալություն է ստացել Մնեղարդյունաբերության ժողկոմ ընկեր Միկոյանից:

Հակոբ Յերզնկյանի պարծանքի և ուրախության յերկրորդ առարկան իր աղջիկն է— Անահիտը: Սա ավարտել է բեչկական ինստիտուտը և այժմ բեչկուհի չէ նոր Բյուլթանիայի դպրոցում: Իր նվիրված աշխատանքի համար նա պարգևատրվել է սանատորիայի ուղեգրով և պատեֆոնով:

Վարպետ Հակոբի յերրորդ զավակը մի քանի տարի առաջ աշխատում էր հոր հետ և ծխախոտի գործարանի հարվածային փակնադրոճներից մեկն էր: Այդուհանդէպ սովորում է Մոսկվայի Բարեմանի անվան ինստիտուտում: Մի քանի տարի հետո նա կդառնա ելեկտրոինժեներ:

Կոմյուրիտական Սուբենն այս յերջանիկ ընտանիքի ամենակրտսեր անդամն է: Նա ընտրել է ուսանողական դրոճը և այժմ նույնպես Մոսկվայում է, սովորում է Ստալինի անվան ուսում-մեխանիկայի ինստիտուտում:

— Յես մեր յերկրի ամենայերջանիկ մարդկանցից մեկն եմ այժմ, — ասում է վարպետ Հակոբը: Հիանարի, հիանալի չէ դարձել կյանքը... Յես այժմ ապրում եմ այնպես, ինչպես 50 տարի շարունակ յերազել եմ միայն: Իսկ այդ բոլորի համար յես շնորհակալ եմ մեր սրբիլի յերկրին, մեր անմահ Ստալինին:



ԲԳ. ԱՐՄԵՆԱԿ ԽՐԻՄԼՅԱՆ
Ղափանի հիվանդանոցի գլխավոր բժիշկը